ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մարտի 2012 թվական N 119-Ա

ք.Հրազդան

ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով «Վիլ Լայն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2012 թվականի մարտի 27-ի գրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մինչև նոր մրցույթի անցկացումն ու դրա արդյունքների ամփոփումը՝ Հրազդան-Սոլակ միկրոավտոբուսային և Հրազդան-Աղավնաձոր ավտոբուսային երթուղիները ժամանակավորապես հանձնել «Վիլ Լայն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սպասարկմանը:

2. Ներմարզային երթուղիների մրցութային հանձնաժողովին՝ սահմանված կարգով իրականացնել ավտոբուսների վիճակի գնահատում և համապատասխանության դեպքում թույլատրել շահագործելու երթուղիներում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ